ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 1473-Ա « 19 » ապրիլի 2024թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1.1-րդ, 2-րդ և 4-րդ մասերով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 50-րդ, 70-րդ և 71-րդ հոդվածներով՝ Երևան քաղաքի 2025 թվականի բյուջետային գործընթացն սկսելու նպատակով.

1. Հաստատել Երևան քաղաքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման գործընթացի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի բյուջետային հայտերը պետք է ներառեն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 15[1]-րդ հոդվածով նախատեսող տեղեկատվությունը.

2) 2025 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը ներառում են կապիտալ բնույթի ծախսերի մասով սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերը, իսկ ընթացիկ ծախսերի գծով՝ հաշվարկ–հիմնավորումները,

3) Երևան քաղաքի 2025 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմելիս պետք է հաշվի առնվեն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 83-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջները:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետի տեղակալներին, խորհրդականներին, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝

1) 2025 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը ներկայացնելիս՝ հաշվի առնել համայնքի բնակիչներից, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտներից ստացված առաջարկությունները.

2) ապահովել սույն որոշման հավելվածով հաստատված ժամանակացույցով նախատեսված աշխատանքների իրականացումը.

3) 20-օրյա ժամկետում սահմանված կարգով պատվիրել 2025 թվականին նախատեսվող կապիտալ բնույթի ծախսերի նախագծանախահաշվային փաստաթղթերը:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համակարգող ղեկավարների վրա:

5. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ**

Հավելված
Երևանի քաղաքապետի
2024 թվականի 19.04 -ի
N 1473 -Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Հ/Հ	Պատասխանատու կատարողներ	Կատարման ենթակա աշխատանքները և միջոցառումները	Փաստաթղթերն ստացող ստորաբաժանումներ (մասնակիցներ)	Աշխատանքների և միջոցառումների կատարման սահմանային ժամկետները
1	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	Երևան քաղաքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) նախագծի մշակման շրջանակներում, հայտերի ձևերի, մեթոդական ցուցումների,լրացման կարգի մշակում և տրամադրում	Երևանի քաղաքապետի տեղակալներ, խորհրդականներ, առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումներ	մինչև 2024 թվականի ապրիլի 19
2	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	Երևան քաղաքի 2025-2027 թվականների ՄԺԾԾ-ի նախագծի կազմման համար պահանջվող լրացուցիչ տեղեկատվության, խորհրդատվության և մեթոդաբանության տրամադրում, քաղաքականության հարցերի շուրջ քննարկումների անցկացում	Երևանի քաղաքապետի տեղակալներ, խորհրդականներ, առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումներ	մինչև 2024 թվականի ապրիլի 25
3	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչություն	Երևան քաղաքի բյուջեի եկամուտներ և մուտքեր ապահովող կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կողմից Երևան քաղաքի 2025-2027 թվականների ՄԺԾԾ-ի եկամտային մասի հայտերի ներկայացում	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	մինչև 2024 թվականի մայիսի 2
4	Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ	Կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կողմից Երևան քաղաքի 2025-2027 թվականների ՄԺԾԾ-ի ծախսային մասի հայտերի ներկայացում	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	մինչև 2024 թվականի մայիսի 20

Հ/Հ	Պատասխանատու կատարողներ	Կատարման ենթակա աշխատանքները և միջոցառումները	Փաստաթղթերն ստացող ստորաբաժանումներ (մասնակիցներ)	Աշխատանքների և միջոցառումների կատարման սահմանային ժամկետները
5	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	3-րդ և 4-րդ կետերով ներկայացված հայտերի վերաբերյալ քննարկումների անցկացում՝ ըստ անհրաժեշտության	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ	մինչև 2024 թվականի հունիսի 7
6	1. Երևանի քաղաքապետի տեղակալ 2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն 3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչություն	Երևան քաղաքի 2025-2027 թվականների միջնաժակետ ծախսերի ծրագրի՝ քաղաքապետի հետ համաձայնեցված նախագծի ներկայացում Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդին այն հանրային քննարկման ներկայացնելու համար	Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդ	մինչև 2024 թվականի հունիսի 13
7	1. Երևանի քաղաքապետի տեղակալ 2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն 3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչություն	Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի կողմից դրական եզրակացություն ստացած Երևան քաղաքի 2025-2027 թվականների ՄԺԾԾ-ի նախագծի ներկայացում հանրային քննարկման		մինչև 2024 թվականի հունիսի 17
8	Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդ	Հանրային քննարկումների արդյունքում Երևան քաղաքի 2025-2027 թվականների միջնաժակետ ծախսերի ծրագրի վերաբերյալ եզրակացության ընդունում այն Երևանի ավագանուն ներկայացնելու համար		մինչև 2024 թվականի հուլիսի 3
9	1. Երևանի քաղաքապետի տեղակալ 2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն 3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչություն	«Երևան քաղաքի 2025-2027 թվականների միջնաժակետ ծախսերի ծրագիրը» Երևանի ավագանու որոշման նախագծի ներկայացում	Երևանի ավագանու խմբակցություններ և անդամներ	մինչև 2024 թվականի հուլիսի 5
10	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագծի մշակման շրջանակներում՝ հայտերի ձևերի, մեթոդական ցուցումների,լրացման կարգի մշակում և տրամադրում	Երևանի քաղաքապետի տեղակալներ, խորհրդականներ, առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումներ	մինչև 2024 թվականի հուլիսի 8

Հ/Հ	Պատասխանատու կատարողներ	Կատարման ենթակա աշխատանքները և միջոցառումները	Փաստաթղթերն ստացող ստորաբաժանումներ (մասնակիցներ)	Աշխատանքների և միջոցառումների կատարման սահմանային ժամկետները
11	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագծի կազմման համար պահանջվող լրացուցիչ տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում, ոլորտային քաղաքականության հարցերի շուրջ քննարկումների անցկացում	Երևանի քաղաքապետի տեղակալներ, խորհրդականներ, առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումներ	մինչև 2024 թվականի հուլիսի 11
12	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչություն	Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի եկամուտների կանխատեսումների վերաբերյալ ամփոփ քննարկումներ	Երևան քաղաքի բյուջեի եկամուտներ և մուտքեր ապահովող կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ	մինչև 2024 թվականի հուլիսի 18
13	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի ծախսերի կանխատեսումների վերաբերյալ ամփոփ քննարկումներ	Երևան քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ	մինչև 2024 թվականի հուլիսի 22
14	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչություն	Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագծի եկամուտների համաձայնեցված կանխատեսումների ամփոփ ներկայացում	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	մինչև 2024 թվականի հուլիսի 25
15	Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ	Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագծի ծախսերի կանխատեսումների վերաբերյալ տեղեկանքների, հաստատված Ձևերի ներկայացում	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	մինչև 2024 թվականի օգոստոսի 1
16	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագծի ծախսերի կանխատեսումների վերաբերյալ քննարկումների անցկացում և համաձայնեցում	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ	մինչև 2024 թվականի սեպտեմբերի 2
18	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ քննարկումների անցկացում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի մոտ	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ	մինչև 2024 թվականի սեպտեմբերի 23

Հ/Հ	Պատասխանատու կատարողներ	Կատարման ենթակա աշխատանքները և միջոցառումները	Փաստաթղթերն ստացող ստորաբաժանումներ (մասնակիցներ)	Աշխատանքների և միջոցառումների կատարման սահմանային ժամկետները
19	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ (ոլորտը համակարգողների հետ համաձայնեցված)	Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագծի լրամշակված հայտերի ներկայացում	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն	մինչև 2024 թվականի սեպտեմբերի 27
21	1. Երևանի քաղաքապետի տեղակալ 2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն 3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչություն	Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի՝ քաղաքապետի հետ համաձայնեցված նախագծի ներկայացում Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդին այն հանրային քննարկման ներկայացնելու համար	Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդ	մինչև 2024 թվականի հոկտեմբերի 14
22	1. Երևանի քաղաքապետի տեղակալ 2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն 3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչություն	Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի կողմից դրական եզրակացություն ստացած Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի լրամշակված նախագծի ներկայացում հանրային քննարկման		մինչև 2024 թվականի հոկտեմբերի 18
23	1. Երևանի քաղաքապետի տեղակալ 2.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն 3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչություն	Հանրային կամ շահագրգիռ անձանց հետ հանդիպումների, բաց լսումների, քննարկումների կազմակերպում		մինչև 2024 թվականի նոյեմբերի 5
24	Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդ	Հանրային քննարկումների արդյունքում Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի լրամշակված նախագծի վերաբերյալ եզրակացության ընդունում այն Երևանի ավագանուն ներկայացնելու համար		մինչև 2024 թվականի նոյեմբերի 11

Հ/Հ	Պատասխանատու կատարողներ	Կատարման ենթակա աշխատանքները և միջոցառումները	Փաստաթղթերն ստացող ստորաբաժանումներ (մասնակիցներ)	Աշխատանքների և միջոցառումների կատարման սահմանային ժամկետները
25	1. Երևանի քաղաքապետի տեղակալ 2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն 3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչություն	«Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ներկայացում	Երևանի ավագանու խմբակցություններ և անդամներ	մինչև 2024 թվականի նոյեմբերի 29